

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

13 փետրվարի 2008 թվականի N 147-Ն

ՆՈՏԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ  
ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱԲԿՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ,  
ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՄԻՋՊԵՏԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ  
ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ  
ՄԱՍԻՆ

«Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել՝

1) նոտարների և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների հարկային մարմնում հաշվառման կանգնելու ընթացակարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) նոտարներին հարկային հաշվառման վերցնելու համար հարկ վճարողների հաշվառման համարի տրամադրման դիմումի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպություններին հարկային հաշվառման վերցնելու համար հարկ վճարողների հաշվառման համարի տրամադրման դիմումի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) նոտարների՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթղթում պարունակվող տեղեկությունների ցանկը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպություններին՝ հարկային հաշվառման վկայականի ձևաթղթում պարունակվող տեղեկությունների ցանկը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) նոտարների՝ հարկ վճարողի հաշվառման վկայականի ձևաթուղթը՝ համաձայն N 6 հավելվածի:

7) Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների՝ հարկային հաշվառման վկայականի ձևաթուղթը՝ համաձայն N 7 հավելվածի:

*(1-ին կետը լրաց. 10.06.11 N 796-Ն)*

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

**Հայաստանի Հանրապետության  
վարչապետ**

**Ս. Սարգսյան**

2008 թ. փետրվարի 25  
Երևան

Հավելված N 1  
ՀՀ կառավարության 2008 թվականի  
փետրվարի 13-ի N 147-Ն որոշման

**Ը Ն Թ Ա Ց Ա Կ Ա Ր Գ**

**ՆՈՏԱՐՆԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ  
ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ  
ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՆՐԱՆՑ ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ  
(ՄԻՋՊԵՏԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
ԿԱՆԳՆԵԼՈՒ**

### **I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՑԹՆԵՐ**

1. Սույն ընթացակարգով կանոնակարգվում են օրենքով սահմանված կարգով նոտարների և Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունների հարկային մարմնում (այսուհետ՝ հարկային տեսչություն) հարկային հաշվառման կանգնելու հարաբերությունները:

*(1-ին կետը փոփ. 22.01.09 N 78-Ն)*

### **II. ՀԱՐԿԱՅԻՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼԸ**

2. Նոտարները հաշվառման են կանգնում այն հարկային տեսչությունում, որի սպասարկման տարածքում է գտնվում նոտարի նոտարական տարածքը:

3. Նոտարին հաշվառող հարկային տեսչությունը նոտարի գրավոր դիմումի հիման վրա կարող է փոփոխվել, եթե նոտարը տեղափոխվում է աշխատանքի մեկ այլ հարկային տեսչության տարածքում գտնվող նոտարական տարածք:

4. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունները հաշվառման են

կանգնում իրենց մշտական ներկայացուցչության (նստավայր, գրասենյակ և այլն) գտնվելու տարածքն սպասարկող հարկային տեսչությունում, որը կարող է փոփոխվել նրանց գրավոր դիմումի հիման վրա:

### III. ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՆԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

5. Նոտարները հարկային հաշվառման կանգնելու և հարկ վճարողի հաշվառման համար ստանալու համար հարկային տեսչություն են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) նոտարի ծառայողական վկայականի պատճենը.

2) նոտարի կողմից լրացված հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման դիմումը:

6. Հարկային տեսչությունը սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը նոտարին հաշվառում և տրամադրում է հարկ վճարողի հաշվառման համար և հարկ վճարողի հաշվառման վկայական:

7. Նոտարի կնիքի վրա նշվում է հարկ վճարողի հաշվառման համարը:

8. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրում ստացած դիվանագիտական ներկայացուցչությունները և հյուպատոսական հիմնարկները, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպությունները հարկային հաշվառման կանգնելու և հարկ վճարողի հաշվառման համար ստանալու համար հարկային տեսչություն են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1) կարգավիճակը հաստատող փաստաթղթի պատճենը.

2) դիվանագիտական ներկայացուցչության կողմից լիազորված պաշտոնատար անձի կողմից լրացված՝ հարկ վճարողի հաշվառման համարի տրամադրման դիմումը:

9. Հարկային տեսչությունը սահմանված փաստաթղթերն ստանալուց հետո ոչ ուշ, քան հաջորդ աշխատանքային օրը Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրում ստացած դիվանագիտական ներկայացուցչություններին և հյուպատոսական հիմնարկներին, նրանց հավասարեցված միջազգային, միջկառավարական (միջպետական) կազմակերպություններին հաշվառում և տրամադրում է հարկ վճարողի հաշվառման համար և հարկ վճարողի հաշվառման վկայական:

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 2  
ՀՀ կառավարության 2008 թվականի  
փետրվարի 13-ի N 147-Ն որոշման

Դ Ի Մ ՈՒ Մ

ՆՈՏԱՐԻՆ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱՐԻ ՏՐԱՄԱՂԻՄԱՆ

1. Նոտարի ազգանունը և անունը \_\_\_\_\_

2. Նոտարական տարածքը \_\_\_\_\_

3. Նոտարական վկայականի համարը \_\_\_\_\_

4. Նոտարական վկայական տալու ամսաթիվը \_\_\_\_\_

5. Նոտարական գրասենյակի հասցեն և հեռախոսահամարը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

6. Նոտարի անձնագրի տվյալները \_\_\_\_\_

7. Նոտարի սոցիալական քարտի կամ դրա բացակայության մասին տեղեկանքի համարը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Նոտար \_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_ (ստորագրությունը)

\_\_\_\_\_ 200 թ.

(Հավելվածը լրաց 10.06.11 N 796-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 3  
ՀՀ կառավարության 2008 թվականի  
փետրվարի 13-ի N 147-Ն որոշման

## Դ Ի Մ ՈՒ Մ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՆՐԱՆՑ  
ՀԱՎԱՍՏԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ  
(ՄԻՋՊԵՏԱԿԱՆ) ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՇՎԱՌՄԱՆ  
ԿԱՆԳՆԵԼՈՒ

1. Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված  
դիվանագիտական ներկայացուցչության, հյուպատոսական  
հիմնարկի, նրանց հավասարեցված միջազգային, միջկառա-  
վարական (միջպետական) կազմակերպության անվանումը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

2. Կարգավիճակը \_\_\_\_\_

3. Հավատարմագրումը (կարգավիճակը)  
հաստատող փաստաթուղթ \_\_\_\_\_

4. Մշտական ներկայացուցչության (նստավայր, գրասենյակ և այլն)  
հասցեն և հեռախոսահամարը \_\_\_\_\_

\_\_\_\_\_

Դիվանագիտական ներկայացուցչության  
լիազոր պաշտոնատար անձ

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

200 թ.

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Մ. Թովուզյան

Հավելված N 4  
ՀՀ կառավարության 2008 թվականի  
փետրվարի 13-ի N 147-Ն որոշման

**Ց Ա Ն Կ**

**ՆՈՏԱՐՆԵՐԻ՝ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԱԹՂԹՈՒՄ  
ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

1. Նոտարի անունը, ազգանունը և հայրանունը
2. Անձնագրային տվյալները
3. Սոցիալական քարտի կամ դրա բացակայության մասին տեղեկանքի համարը
4. Լուսանկարը
5. ՀՎՀՀ-ն
6. Նշում՝ հաշվառման վերցրած հարկային (տարածքային) տեսչության վերաբերյալ, և հաշվառման վերջման ամսաթիվը
7. Հարկային (տարածքային) տեսչության պետի անունը, ազգանունը, ստորագրությունը, կնիքը:

(Հավելվածը լրաց 10.06.11 N 796-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Մարգարյան

Հավելված N 5  
ՀՀ կառավարության 2008 թվականի  
փետրվարի 13-ի N 147-Ն որոշման

**Ց Ա Ն Կ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՎԱԾ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ  
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՄԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՆՐԱՆՑ  
ՀԱՎԱՍԱՐԵՑՎԱԾ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ, ՄԻՋԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ (ՄԻՋՊԵՏԱԿԱՆ)  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆԻ ՁԵՎԱԹՂԹՈՒՄ  
ՊԱՐՈՒՆԱԿՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ**

1. Դիվանագիտական ներկայացուցչության (հյուպատոսական հիմնարկի, միջազգային կազմակերպության անվանումը

2. ՀՎՀՀ-ն

3. Նշում հաշվառման վերցրած հարկային (տարածքային) տեսչության վերաբերյալ, և հաշվառման վերցման ամսաթիվը

4. Հարկային (տարածքային) տեսչության պետի անունը, ազգանունը, ստորագրությունը, կնիքը:

(Հավելվածը լրաց 10.06.11 N 796- Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

Հավելված N 6  
ՀՀ կառավարության 2008 թվականի  
փետրվարի 13-ի N 147-Ն որոշման

Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն

ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ

(նոտարի անունը, ազգանունը, հայրանունը)

(անձնագրային տվյալները)

(սոցիալական քարտի կամ դրա բացակայության մասին տեղեկանքի համարը)

ՀՎՀՀ \_\_\_\_\_

Հաշվառման է վերցված \_\_\_\_\_ հարկային  
(տարածքային) տեսչության կողմից \_\_\_\_\_ 20 թ.

(հարկային (տարածքային) տեսչության պետ)

(անունը, ազգանունը)

(ստորագրությունը)

Կ. Տ.

(Հավելվածը լրաց 10.06.11 N 796- Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Սարգսյան

Հավելված N 7  
ՀՀ կառավարության 2008 թվականի

**Վ Կ Ա Յ Ա Կ Ա Ն**

**ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ**

(ղիվանագիտական ներկայացուցչության (հյուպատոսական հիմնարկի, միջազգային կազմակերպության անվանումը)

ՀՎՀՀ \_\_\_\_\_  
Հաշվառման է վերցված \_\_\_\_\_ հարկային  
(տարածքային) տեսչության կողմից \_\_\_\_\_ 20 թ.

\_\_\_\_\_  
(հարկային (տարածքային) տեսչության պետ)

\_\_\_\_\_  
(անունը, ազգանունը)

\_\_\_\_\_  
(ստորագրությունը)

Կ. Տ.

(Հավելվածը լրաց 10.06.11 N 796-Ն)

Հայաստանի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար

Դ. Մարգարյան